«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի
EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինչպե՞ս կազմակերպել գրաճանաչության նախապատրաստական աշխատանքները ուսուցման նախայբբենական փուլում

Հետազոտող ուսուցիչ՝ Վարդիշաղ Վարդանյան
(Գավառի Գ. Մնացականյանի անվան թիվ 7 միջնակարգ դպրոց)
Աշխատանքի ղեկավար՝ Ժենյա Միրիբյան

ԳԱՎԱՌ 2023թ.

Բովանդակություն

Ներածություն ……..…….3

Գլուխ 1.

1.1. Նախայբբենական շրջանի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները ……..… 5

1.2. Ուսումնական գործունեությանը երեխաների նախապատրաստության մակարդակի բացահայտում……6

1.3. Նախայբբենական շրջանի վերջում աշակերտների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների սահմանները…….…….8

1.4 Գրաճանաչության նախայբբենական շրջանի դասերին ներկայացվող մանկավարժական պահանջները…….....……..……9

Գլուխ 2.

2.1. Գրաճանաչության նախայբբենական շրջանում իրականացվող աշխատանքի բովանդակությունը…….……10

2.2. Գաղափար նախադասության մասին……12

2.3. Գաղափար բառի մասնին……13

2.4. Բառի կազմություն: Վանկ: 14

2.5. Գաղափար հնչյունի մասին…….…….…… 15

Եզրակացություն……..…….…… 22

Օգտագործված գրականության ցանկ …….…….……..24

Ներածություն

Թեմայի արդիականացումը

Կյանքի, գիտության, տեխնիկայի ու մշակույթի հարաճուն զարգացմանը զուգընթաց դպրոցն էլ անընդհատ զարգանում ու կատարելագործվում է՝ հնարավորին չափ համահունչ դառնալով կյանքի հետ:

Դպրոցի վերջին վերակառուցումը կապված է ուսուցման բովանդակության արդիականացման պահանջի կենսագործման հետ, որը, բնականաբար, իր հետ բերեց գոյություն ունեցող ուումնական ծրագրերի, դասագրքերի և ուսուցման ձևերի ու մեթոդների զգալի փոփոխում:

Գիտատեխնիկական բուռն առաջադիմության պայմաններում դպրոցը կոչվում է սովորողներին զինելու այնպիսի գիտելիքներով, որոնք արտացոլում են գիտության ամենաժամանակակից մակարդակը (իսկ դա պահանջում է մշտապես կատարելագործել ուսուցման մեթոդները՝ մանկավարժական գործընթացի մեջ արմատավորել տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաները) :

Ուրեմն ինչպիս՞ն պետք է լինի 21-րդ դարի առաջին դասարանի դասագիրքը, ի՞նչ կառուցվածք պետք է ունենա, որ իր դեմքը չկորցնի, որ դիմադրի հեռուստացույցին, համակարգչին, բազմաթիվ տեսասարքերին, դրանցով տրվող հսկայածավալ տեղեկույթի դարում պահպանի իրենը՝ անկրկնելին ու անփոխարինելին:

Ինչպիսի՞ն պետք է լինի առաջին դասարանի դասագիրքը, որ երեխան հափշտակվի նրանով, որ չկորչեն նրա ընկալման սրությունն ու թարմությունը, որ ձևավորվեն ու զարգանան նրա ստեղծագործական երևակայությունն ու մտածողությունը, ամրապնդվի կամային ուշադրությունը, աճի ու հզորանա հիշողությունը:

Այսօր արդեն պարզ է, որ տարրական դասարանների ցանկացած դասագրքի հաջողության գրավականն է, թե այդ դասագրքով ուսուցումը որքանով է զվարթ, գրավիչ ու հետաքրքրաշարժ դառնում:

Այդ դասագրքերի շարքին է պատկանում առաջին դասարանի դասագրքերից մեկը՝ «Այբբենարանը» (հեղինակ՝ Վ. Ա. Սարգսյան), որում հետաքրքիր ու գրավիչ հնարքներով, բազմաբնույթ առաջադրանքներով, զվարթ պատմություններով, խնդուկներով ու բառախաղերով, սուտասելուկներով ու շուտասելուկներով,

հանելուկներով, առածներով ու ասացվածքներով և բազմաթիվ այլ միջոցներով, ուսուցումը դառնում է հեշտ ու հաճելի, և որ ամենակարևորն է՝ արդյունավետ:

Բականաբար, «Այբբենարանում» ամեն ինչ նպատակաուղղված է երեխայի ստեղծագործական երևակայության և մտածողության, կարդալու կարողությունների, խոսքի զարգացմանը, ինքնուրույն, ինքնավստահ, հոգեպես ու մարնապես առողջ անձի ձևավորմանը: Վերջապես, գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեհամակարգի ձեռքբերմանը:

Նպատակը և խնդիրները

Դասագիրքը կազմված է երեք բաժիններից՝ նախաայբբենական, այբբենական և հետայբբենական, որոնցից յուրաքանչյուրն ունի իր որոշակի խնդիրներն ու նպատակները՝ ինչպես ուսուցողական, այնպես էլ՝ դաստիարակչական առումով:

Այս բաժինների հիմնական նպատակը երեխաներին գրաճանաչության նպաստելն է: Այդ պատճառով էլ Վ. Սարգսյանի հեղինակած դասագրքում բավականին երկարել է գրաճանաչության նախապատրաստական փուլը:

Այն պետք է լինի շատ հանգամանալից ու տևական, քանի որ երեխաները պետք է նախապատրաստվեն ուսումնական գործընթացին՝ թե՛ հոգեբանորեն, թե՛ ֆիզիկապես և թե՛ լեզվական տեսակետից:

Այս բաժնի հիմնական նպատակը երեխաներին գրաճանաչության նախապատրաստելն է. այստեղ տեղ գտած թեմատիկ նկարները, նկար-պատմությունները («Բարի գալուստ», «Աշխարհի գույները», «Մեր փոքրիկ բարեկամները», «Ընտանիք», «Դասարան», «Գյուղ», «Քաղաք», «Բնության գրկում», «Սևանը» և մի շարք այլ նյութեր), նախադասության ու բառի ընդհանրացված գծապատկերները խոսքի զարգացման հիմքն են, իսկ բառի վանկային և հնչյունային կազմի գծապատկերները լեզվական վերլուծությունների ու համադրությունների, կարդալու կարողությունների ձևավորման հիմքն են:

Նախաայբբենական բաժինը կառուցված է այնպես, որ երեխաների մեջ արթնացնի հետաքրքրքսիրություն, սեր գրքի և դպրոցի նկատմամբ, սովորելու ցանկություն: Առնչվելով դասագրքի բազմաբնույթ առաջադրանքներին, հաճույքով կատարելով դրանք՝ երեխաները ուժեղ կզգան իրենց, կդառնան զվարթ, շփվող, նրանք կձգտեն լինել ավելի լավը, հաջողակ ու խելացի:

Նախայբբենական շրջանի հիմնական նպատակներից մեկն էլ երեխաներին միասնական դասարանական կոլեկտիվի մեջ ընդգրկելը և կարդալ ու գրել սովորելու աշխատանքի համար նրանց տեսականորեն, հոգեբանորեն ու ֆիզիկապես նախապատրաստելն է:

Այդ պատճառով էլ «Այբբենարանի» հեղինակը նպատակահարմար է գտել ընտրել գրաճանաչման երեք փուլերով իրականացնելու արդեն ընդունված, գիտականորեն ապացուցված ու տարիների փորձով հիմնավորված եղանակը՝

ա- նախապատրաստական կամ նախայբբենական շրջան

բ- այբբենական կամ գրուսուցման շրջան

գ- հետայբբենական շրջան

Գլուխ 1

1.1. Նախայբբենական շրջանի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

Գրաճանաչության ցանկացած մեթոդով աշխատելիս, անկախ հայեցակարգային դիրքորոշումներից, գրեթե առանց բացառության առանձնացվում է հատուկ նախապատրաստական շրջան, որի ժամանակ լուծվում են ուսուցման այդ փուլի մշակված գրաճանաչության շրջանի բովանդակությամբ և մեթոդներով, նախադպրոցական տարիքի երեխաների տարիքային առանձնահատկություններով, կրթօջախի տեսակով և կրթության այդ օղակի նպատակներով պայմանավորված որոշակի խնդիրներ:

Գրաճանաչության նախայբբենական կամ նախապատրաստական շրջանի հիմնական խնդիրները կարելի է բաժանել երկու խմբի՝ կազմակերպման և ուսումնական:

Կազմակերպման խնդիրներն են՝

1. Երեխաների ծանոթացում նրանց համար նոր ուսումնական գործունեությանը.

   ա. ուսուցչի ծանոթությունը աշակերտների հետ

   բ. աշակերտների ծանոթացումը միմյանց հետ, մանկական կոլեկտիվի ստեղծում

   գ. ծանոթություն կրթական տվյալ հաստատության կարգ ու կանոնին, դպրոցական շենքին

դ. ծանութություն երեխաների իրավունքներին ու պարտականություններին

2. Հարմարեցում ուսումնական գործունեության (ադապտացիա)

ա. աշակերտական նստարանին ճիշտ նստելու, խոսելու ցանկության դեպքում ձեռք բարձրացնելու և ձայն խնդրելու, խոսելիս կամ պատասխանելիս անհրաժեշտության դեպքում կանգնելու ունակությունների մշակում

բ. ուսուցչին, ընկերներին և իրեն դիմած յուրաքանչյուրին բարձրաձայն, հստակ և ամբողջական խոսքով պատասխանելու կարողության ձևավորում, ուսուցչի խոսքը լսելու, հասկանալու նրա տված հանձնարարությունները կատարելու ունակության զարգացում

գ. ընկերներին, ուսուցիչներին և միջավայրի մարդկանց լսելու և նրանց խոսքին բարեկիրթ արձագանքելու ունակության ձևավորում

դ. գրքից և գրենական պիտույքներից օգտվելու և դրանց նկատմամբ խնամքի կանոնների յուրացում:

Ուսումնական խնդիրներն են

1.2. Երեխաների պատրաստականության մակարդակի բացահայտում ուսումնական պրոցեսում

Այս խնդրի ուսումնասիրությունն ուսուցիչն իրականացնում է մինչև ուսումնական տարվա սկսվելը: Ուսուցիչը պետք է ուսումնասիրի դասարանի աշակերտների անձնական գործերը, զրուցի ծնողների հետ, հանգամանորեն հետաքրքրվի նրանց առողջական տվյալներով, ակնառու ընգծված առանձնահատկություններով: Երեխաների պատրաստվածության մակարդակի ուսումնասիրությունը կարևոր նյութ է տալիս ուսուցչին գրաճանաչության գործընթացը մեթոդապես ճիշտ կազմակերպելու համար:

Ծանոթությունն իրականացվում է նախապես մշակված հարցերի շուրջ իրականացվող ակտիվ զրույցի, պարզ առաջադրանքների կատարման ճանապարհով: Արդյունքներն ամփոփելու համար ուուցիչը պետք է պարզի յուրաքանչյուր աշակերտի՝

ա) խոսելու, բացատրելու, հարցեր տալու, ընկերներին և ուսուցիչներին լսելու, հասկանալու, ուսուցչի հանձնարարությունները կատարելու, ընկերների և ուսուցիչների հետ հաղորդակցվելու ունակությունների մակարդակը

բ) հնչյունային լսողության մակարդակն ու հայերեն հնչյունների ճիշտ արտասանելու կարողությունը.

- բառերն արտասանում է գրական հայերենի ճիշտ շեշտադրությամբ
- հնչյուններն արտասանում է որոշակի սխալներով (ունի լեզվական արատ)
- ունի խղճուկ, կծկտուր, ցածրաձայն խոսք
- ունի արտահայտիչ խոսք

գ) բանավոր կապակցված խոսք.

- ունի տարիքին համապատասխան բառապաշար, անգիր գիտի և արտասանում է փոքրիկ բանաստեղծություններ
- գիտի և կարողանում է վերարտադրել ունկնդրած պատմությունները, հեքիաթները (ինքնուրույն կամ հարցերի օգնությամբ)
- ուսուցչի հարցերի օգնությամբ կարող է առաջադրված պարզ բովանդակություն ունեցող նկարների շուրջ պատմել մեկ-երկու մտքով իրար հետ կապված նախադասություն
- ուսուցչի, տարեկիցների և ավագների հարցերին պատասխանում է ընդարձակ (համառոտ) և ավարտուն նախադասություններով
- ուսուցչի կամ օտար մարդկանց ներկայությամբ կաշկանդված է, չի խոսում

դ) խոսքի շարահյուսական կառույցը

- կազմված է հստակ կառուցվածք ունեցող շարահյուսորեն ավարտուն պարզ նախադասություններվ
- կազմված է միայն պարզ, ոչ ավարտուն նախադասություններով
- կապակցված խոսքում օգտագործված նախադասությունների միջև բացակայում են տրամաբանական պատճառահետևանքային կապերը
- չունի ամբողջական նախադասություններ կառուցելու ունակություն
- նախադասությունները թողնում է անավարտ և անցնում նոր մտքի
- նախադասությունները թողնում է անավարտ:

Այս և ուսուցչի կողմից արժևորվող այլ տվյալները նրան պետք են ոչ թե ըստ երեխաների գիտելիքների և կարողությունների մակարդակի դասարանները ձևավորելու, այլ դրանք ուսումնական գործընթացում հաշվի առնելու և ըստ դրանց իր ծրագիրն ու պարապմունքները պլանավորելու և նախապես պլանավորած ծրագրին

համապատասխան իրականացնելու, ծնողների հետ անհրաժեշտ աշխատանք տանելու համար:

1.3. Նախայբբենական շրջանի վերջում աշակերտների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների սահմանները

Գրաճանաչության այբբենական շրջանն արդյունավետ իրականացնելու համար երեխաները նախայբբենական շրջանի վերջում պետք է՝

- գաղափար ունենան պատմության, նախադասության, բառի, վանկի, հնչյունի (ձայնավոր, բաղաձայն) մասին և այդ եզրույթն օգտագործեն խոսքում
- պարզագույն սիմվոլիկ զննականության միջոցով (գծապատկեր) կարողանան ներկայացնել նախադասությունը, բառը, վանկը, տառը
- ձայնավոր և բաղաձայն հնչյունները տարբերակեն և գունային սիմվոլի միջոցով դրանք արտահայտեն գծապատկերում
- գիտակցեն ձայնավորի դերը վանկակազմավորման գործում
- ունենան որոշակի բառապաշար և մտքերն ինքնուրույն կապակցված խոսքով ներկայացնելու (2-3 նախադասությամբ) կարողություն
- ձեռքերը նախապատրաստված լինեն գրելուն
- ունենան ներկելու, նկարելու, որոշակի գծային սահմանների միջև հանձնարարվող գործողությունները կատարելու կարողություններ
- կարողանան գրել հայերենի տառերի պարզ մասնիկները՝ ըստ նրանց չորս տեղադրության:

Ունկնդրում և խոսք

- կարողանան ուսուցչի կարդացած կամ պատմած փոքրածավալ հեքիաթները, պատմվածքները, բանաստեղծություններն ունկնդրել և հարցերի օգնությամբ վերարտադրել
- անգիր իմանան և արտահայտիչ արտասանեն սովորած բանաստեղծությունները, շուտասելուկները

- կարողանան մանկական թեմայով առանձին նկարների շուրջ իրար կապված 2-3 նախադասություն կազմել, որոշել նախադասության կազմի մեջ մտնող բառերի քանակը (ուսուցչի օգնությամբ)
- կարողանան պատմել ըստ տեսածի, ըստ ունկնդրածի, ըստ հիշողության, ըստ նկարի
- կարողանան խաղալիքների և նկարների միջոցով բառերը խմբավորել ըստ ընդհանրացնող անունների (խաղալիքներ, սպասք, ծաղիկներ և այլն):

1.4. Գրաճանաչության նախայբբենական շրջանի դասերին ներկայացվող մանկավարժամեթոդական պահանջները

Գրաճանաչության նախայբբենական շրջանի պարապմունքները կառուցվում են հաշվի առնելով դպրոց նոր ընդունված երեխաների տարիքային առանձնահատկությունները՝ մասնավորապես ուշադրության և հիշողության առանձնահատկությունները. երեխաները երկար ժամանակ չեն կարող լսել, զբաղվել միևնույն գործողությամբ. արագ հոգնում են և այլն:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է նրանց զբաղվածության ձևերը փոխել յուրաքանչյուր 10-15 րոպեն մեկ՝ դասի յուրաքանչյուր փուլում պարապմունքն իրականացնելով դասի ընդհանուր պլանին և նպատակին համապատասխան: Աշխատանքը դասի ժամանակ կազմակերպվում է այնպես, որ զրույցներն ու պատմություններն ընդհատվեն երեխաների ակտիվ զբաղվածությամբ, այդ թվում՝ ֆիզիկական վարժություններով:

Դասերի ժամանակ նախատեսվում են հետաքրքրաշարժ խաղային պահեր՝ հանելուկների գուշակում, հեքիաթների պատմում, դրանց բեմադրում, ազատ կամ թեմատիկ նկարչություն, երգ, պար, ռիթմիկա և այլն:

Երեխաների ուսուցումը առաջին դասարանում նպատակահարմար է իրականացնել խաղի ճանապարհով:

«Ավելի շատ խաղ, ուրախություն ու զվարճանք պետք է լինի և Քիչ լուրջ աշխատանք, ավելի քիչ՝ պարտադրանք, շատ՝ վարժեցում»:

Աշոտ Տեր-Գրիգորյան

Նախայբբենական շրջանի դասերի հիմնական մեթոդական շղթան (շղթայի քայլերն իրականացվում են 2 դասաժամի ընթացքում) `

1. Կազմակերպման պլան
2. Տնային աշխատանքի ստուգում
3. Ֆիզկուլտդադար
4. Անցած ուսումնական նյութի կրկնություն, ամրակայում
5. Հանձնարարված թեմայի կամ թեմատիկ նկարի շուրջ հարցազրույց
6. Շարժախաղեր
7. Հնչյունային վերլուծություն, նոր նյութի հաղորդում
8. Դիդակտիկ և հետաքրքրաշարժ խաղեր
9. Նոր նյութի ամրակայում, մարզողական վարժություններ
10. Մատները գրելուն նախապատրաստող վարժություններ
11. Գրում
12. Ամփոփում

Գլուխ 2.

2.1. Գրաճանաչության նախայբբենական շրջանում իրականացվող աշխատանքի բովանդակությունը

Գրաճանաչության նախայբբենական շրջանում աշակերտները յուրացնում են գրաճանաչության ուսուցման արդյունավետության համար կարևոր լեզվական մի շարք հասկացություններ՝ գործնականորեն նախապատրաստվելով կարդալու և գրելու գործընթացին:

- **Խոսք**: Մեծադիր թեմատիկ նկարի շուրջ ուսուցչի հարցերի օգնությամբ երեխաները կազմում են մտքով իրար հետ կապված մի քանի նախադասություն, որոնց ամբողջությունը հետագայում նրանք անվանում են «**պատմություն**»:

Այսպես օրինակ. «Այբբենարան» դասագիրքը դրված է սովորողների առջև: «Ինչ է նկարված գրքի կազմին», - հարցնում է ուսուցիչը:

Երեխաները նկարագրում են, լրացնում միմյանց: Ուսուցիչը ևս բացատրում է, լրացնում երխաների թողածը, ավելացնում, որ դասաքրքի կազմին Մասիս սարն է:

Երեխաները նայում են տիեզերանավով դեպի իրենց թռչող հասակակիցներին: Նրանցից մեկի ձեռքին ոսկե բանալին է: Ոսկե բանալին հայոց այբուբբենն է, որը գրված է տիեզերանավի թևերին: Երեխաներն ուրախ են, որ իրենք էլ շուտով գրաճանաչ կդառնան, կսովորեն կարդալ ու գրել և այլն:

Գրաճանաչության նախապատրաստական փուլում տարբեր նկարների շուրջ երեխաներն ուսուցչի հարցերի օգնությամբ պատմություններ են հյուսում, վերարտադրում են ունկնդրած փոքրիկ պատմվածքներն ու հեքիաթները: Երբ այս կարողությունները որոշակի մակարդակով ձևավորվում են, կարելի է անցնել հաջորդ քայլին՝ գաղափար տալ գծապատկերի մասին: Այդ նպատակով ուսուցիչը բացատրում է, որ պատմությունը կարելի է գրել նույնիսկ առանց տառերը ճանաչելու, այսինքն գծել:

Ուսուցիչը գծում է մի ուղղանկյուն և ասում.



–Պատմությունը տեղավորված է այս վանդակի մեջ: Այսինքն վանդակը պատմության տնակն է: Ուրեմն մենք ինչ պատմություն էլ հյուսենք, կարող ենք տեղավորել այսպիսի տնակում:

Խոսքի զարգացման նպատակով անհրաժեշտ է պարբերաբար աշխատանք միայն նկարների շուրջ մեկ-երկու մտքով իրր հետ կապված նախադասություններ կազմելու կարողության մշակման, այլև՝ երեխաներին անընդհմեջ խոսեցնելու ուղղությամբ՝ խոսքը զուգորդելով լիարժեք գործողություններով:

Պետք է աստիճանաբար հասնել նրան, որ աշակերտները կարողանան գրագետ և ամբողջական խոսքով արտահայտել այն, ինչ կատարում են: Առաջին շրջանում ուսուցիչն ինքը տա խոսքի նմուշ `անընդհատ խոսելով երեխաների հետ:

Նախայբբենական շրջանում իբևր նմուշօրինակ ուսուցչի հյուսած պատմությունը պետք է՝

- Հնչի հանդարտ, պարզ, երեխաներին ընկալելի ոճով
- Կազմված լինի 3-4 նախադասությունից
- Նախադասությունները կազմված լինեն 2-3 բառից

- Նախադասության կազմի մեջ մտնող բառերը վերցված լինեն երեխաների ակտիվ բառապաշարից
- Խոսքը պետք է զուգորդվի ցուցադրումներով:

2. 2. Գաղափար նախադասության մասին

Թեմատիկ նկարի շուրջ պատմություն հյուսելու, ազատ ինքնուրույն խոսք կառուցելու տարրական կարողության ձևավորումից հետո պիտի մշակել ուսուցչի հարցերի օգնությամբ նախադասությունները պատմությունից առանձնացնելու ունակություն Այս կարողության մշակման համար ուսուցիչը դանդաղ, նախադասություն առ նախադասություն պիտի արտասանի պատմությունը՝ առաջարկելով ծափերի միջոցով հաշվել, թե այն քանի մասից է կազմված: Աշակերտները հաշվում են և որոշում, որ պատմության գծապատկերը բաժանվում է մասերի՝ բացատրելով. «Քանի որ մեր պատմությունը ունի երեք մաս, ուրեմն գծապատկերը պետք է ունենա երեք մաս»: Այնուհետև պետք է բացատրվի, որ այս մասերից յուրաքանչյուրը պատմության մեկ մաս է և պատմության բովանդակության հետ կապված մեկ միտք է արտահայտում: Ուրեմն պատմության մեջ կա 3 միտք:

Ապա միտք բառի փոխարեն երեխաները սովորում են օգտագործել «**նախադասություն»** բառը և գծել նախադասության գծապատկերը.

Այնուհետև երեխաներին պետք է բացատրել, որ ամեն մի առանձին, նոր սկսվող միտք՝ նախադասություն, պետք է գրել մեծատառով:

Արան նվագում է: (Վ. Ա. Սարգսյան «Այբբենարան», էջ 26)

Երեխաների ուշադրությունը պետք է հրավիրել նաև գծապատկերի վերջակետի վրա և բացատրել, որ նախադասության գծապատկերի վերջում դրված է երկու կետ: Դա նշանակում է, որ միտքն ավարտված է. նախադասությունը վերջացել է: Նախադասության վերջում դրված այդ երկու կետերին անվանում ենք վերջակետ:

Այսպիսով, աշակերտներն սովորում են, որ ամեն մի պատմություն կազմված է նախադասություններից, նախադասությունը սկսվում է մեծատառով և վերջում դրվում է վերջակետ:

2.3 Գաղափար բառի մասին

Նախադասությունը վերլուծելու և նրա բաղադրիչները դիտարկելու միջոցով աշակերտներին գաղափար տալ նաև բառի մասին, որպիսի բառն ամենից առաջ ընկալվի որպես նախադասության մաս և ապա նոր՝ որպես որևէ կոնկրետ իմաստ արտահայտող առանձին լեզվական միավոր:

Բառի մասին գաղափարը նույնպես տրվում է գծապատկերի օգնությամբ:

Ուսուցչուհին դանդաղ, դադարներով արտասանում է նախադասությունը՝ յուրաքանչյուր բառի հետ ծափ տալով: Երեխաները ծափ են տալիս ուսուցչի օգնությամբ, որոշում նախադասության մասերի թիվը: Ուսուցչուհու օգնությամբ նախադասության գծապատկերը բաժանվում է 3 մասի: Այնուհետև «**մաս**» բառը փոխարինվում է «**բառ**»-ով: Իբրև բառ ներկայացվում է նաև օժանդակ բայը:

Արան նվագում է:

Գծապատկերի շուրջ տարվող վերլուծական աշխատանքը ժամանակատար, աշխատար գործընթաց է և ուսուցչից մեծ ջանքեր է պահանջում:

Որպեսզի երեխաները հասկանան, թե ինչ դեր ունեն բառերը նախադասության մեջ և , որ դրանց ճիշտ դասավորության դեպքում միայն նախադասությունը իմաստ կարտահայտի, կարելի է կազմակերպել «Մենք նախադասության բառեր ենք» խաղը:

Խաղի ընթացքը. երեխաների կազմած նախադասություններից մեկի բառերը «բաժանվում» են երեխաներին: Ամեն մեկը դառնում է նախադասության մեկ բառը: Նրանց հանձնարարվում է, որ երբ յուրաքանչյուրն իր բառն արտասանում է դասարանը կրկնում է նախադասությունն ամբողջությամբ: Այնուհետև երեխաների տեղերը փոխվում են՝ բառերը նույնպես պահելով: Նորից յուրաքանչյուրն արտասանում է իր բառը:

Դասարանը կրկնում է և եզրակացնում, որ անիմաստ բան ստացվեց, ասվածը նախադասություն չէր:

Այս խաղը նպաստում է աշակերտների մեջ ուսումնական գործունեության կարևոր բաղադրիչների՝ սեփական գործողությունների կատարման հսկողության և վերահսկման, ինչպես նաև իր կատարած աշխատանքի գնահատման ունակությունների մշակմանը:

2.4. Բառի կազմություն: Վանկ:

Վանկի մասին գաղափար կարելի է տալ միայն այն ժամանակ, երբ բառի մասին տրված հասկացությունը ամրակայվել է: Նախադասություններից բառերն առանձնացնելու համար դարձյալ գծվում են մի քանի նախադասությունների գծապատկերներ: Այնուհետև ընտրվում է մեկ նախադասություն, դրանից ընտրվում որևէ բառ: Ցանկալի է, որ այն ունենա երկու վանկ, իսկ հետո կարելի է աշխատանքը տանել եռավանկ, քառավանկ բառերի շուրջ: Ուսուցչուհին նախ ընտրված բառն արտասանում է առանց վանկերի բաժանելու, ապա՝ վանկերի բաժանելով:

Շահեկան է այս աշխատանքը իրականացնելիս ցուցադրել այն առարկաները կամ նրանց նկարները, որոնց անվանումների շուրջ տարվում է վանկային աշխատանքը: Յուրաքանչյուր առարկայի անվանումը երեխաներն են արտասանում՝ ծափ տալով այն բաժանում են մասերի. սա-լոր, ա-թոռ, կա-տու և այլն (դասագրքի էջ 29-30) և հաշվում մասերի քանակը: Երեխաները գալիս են այն համոզման, որ շրջապատում կան առարկաներ, որոնց անունները կարելի է արտասանել մեկ ծափով. տուն, սար, երկու ծափով. սեղան, աղվես, երեք ծափով. ծիծեռնակ, պահարան և այլն: Նրանց պետք է բացատրել, որ այդ ծափերի թիվը պայմանավորված է բառերի մասերի քանակով: Սկզբում բառի ինքնուրույն միավորին երեխաներն անվանում են մասեր, որովհետև այս բառն ավելի լավ է արտահայտում նրանց էությունը, և երեխաները շուտ են հասկանում: Իսկ հետագայում, երբ բառի մեջ եղած ինքնուրույն միավորների վերաբերյալ երեխաները որոշակի գաղափար կկազմեն, կկարողանան տրված բառը մասերի բաժանել, ասել, թե քանի մասից է կազմված այն, արդեն կարելի է ասել, որ բառի այդ մասերին անվանում ենք «**վանկ**»:



Բառը վանկերի բաժանելու, վանկերն իրար միացնելով բառեր ստանալու, բառի մեջ վանկի տեղը գտնելու կարողությունների զարգացման նպատակով կարելի է կատարել վարժություններ, խաղալ ուսուցողական խաղեր՝ «Նշի՜ր ավելորդը» (Ա. Բալայան՝ «Նախաշավիղ», 3.2017)

2.5. Գաղափար հնչյունի մասին

Ուսուցչի հանձնարարությամբ երեխաներն ասում են միավանկ բառեր: Ուսուցիչը դրանցից ընտրում է և գրատախտակին գծում կամ երեխաներին գծել տալիս այն բառերի գծապատկերները, որոնք թեև միավանկ են, բայց ունեն տարբեր քանակի հնչյուններ: Օրինակ՝ ուլ, տուն, սար, վարդ և այլն:

-Ինչո՞ւ են այս բառերի գծապատկերները տարբեր, չէ որ դրանք արտասանվեցին մեկ ծափով: Որպես կանոն այս հարցին երեխաները չեն պատասխանում:

Ուսուցչուհին դարձյալ արտասանում է նույն բառերն այնպես ընդգծված, որ նրանց երկար և կարճ արտասանությունից երեխաները կռահում են: Եթե չեն կռահում, կարելի է բացատրել.

- Բառերը երկար են կամ կարճ՝ կապված այն բանի հետ, թե նրանց մեջ հնչող ձայների թիվը մեծ է, թե փոքր:

- Հիմա կասեմ բառերը, դուք որոշեք, թե ինչ է հնչում բառի սկզբում, մեջտեղում և այնուհետև՝ վերջում:

- *Տուն*:

- Ի՞նչ լսեցիք բառի սկզբում:

- «*տ* »:

Այնուհետև աշակերտների ուշադրությունը հրավիրվում է բառի մեջտեղի հնչյունի վրա.

- Ի՞նչ լսեցիք բառի մեջտեղում:

- «*ու*»:

- Եվ ի՞նչ է հնչում «տուն» բառի վերջում:

- «*ն* »:

(«Այբբենարան», էջ՝ 30)

Համեմատաբար մատչելի է բաց վանկերի հնչյունային վերլուծությունը: Վերջինս առավել բարդանում է, երբ երեխան առանց վանկատելու փորձում է մի քանի անգամ արագ արտասանել բառը: Այս դեպքում թույլ հնչող բաղաձայնը կարող է դուրս ընկնել, ուժգին հնչողը՝ գրվել և այլն:

Երեխաների ուշադրությունը պետք է հրավիրել բառասկզբի հնչյունի, հետո՝ բառամիջի հնչյունի վրա, որովհետև ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նրանք ամենից հեշտ լսում են բառասկզբի հնչյունը, ապա բառավերջինը, հետո նոր՝ բառամիջինը: Ընդ որում, պետք է ընտրել նախ երկու հնչյուն ունեցող բառեր. ձի, ուլ, ապա՝ եռահնչյուն. նուշ, հավ, և ապա՝ քառահնչյուն. աթոռ և այլն:

Գաղափար ձայնավոր և բաղաձայն հնչյունների մասին

Ձայնավոր և բաղաձայն հնչյունները երեխաները պետք է սովորեն տարբերակել գործնական ճանապարհով: Այս նպատակով կատարվում է որևէ բառի հնչյունային վերլուծություն. օրինակ՝ «*հավ*» բառը: Ուսուցչուհին դասարանին խնդրում է խմբով արտասանել այն հնչյունը, որը լսվում է բառասկզբում: Երեխաները երկար արտասանելուց հետո «հայտնաբերում են», որ առաջին հնչյունը՝ «*հ* » -ն, երկար արտասանելուց հետո «կորչում է» և նրա փոխարեն լսվում է «*ը* »: Նույն ճանապարհով նկատում են, որ այդպես է լսվում նաև «*վ* » հնչյունը:

- Իսկ հիմա եկեք արտասանենք այն հնչյունը, որը լսվում է բառամիջում՝ *«ա»* երկար արտասանում են երեխաները և աշխուժորեն նկատում, որ *«ա»* հնչյունը մինչև վերջ լսվում է:

Հետագայում բացատրվում է նաև, որ երկար, մաքուր արտասանվող հնչյունների արտաբերման ժամանակ բերանի խոռոչում արգելքներ չեն առաջանում:

Այսպիսի աշխատանք է կատարվում դասագրքում տրված (էջ՝ 30-31) «նուշ», «տուն», «սար» և այլ բառերի շուրջ՝ խորացնելով բացատրությունը:

Ուսուցչուհին ամփոփում է, որ *«ա»*, *«ու»* արտասանելիս օդը բերանից դուրս է գալիս առանց արգելքի, իսկ *«վ»*, *«տ»* , *«ս»* արտասանելիս շուրթերը կպնում են իրար կամ լեզուն կպչում է ներքևի ատամներին՝ բերանի խոռոչում այդ հնչյունների արտասանության ժամանակ արգելքներ առաջացնելով:

Նմանատիպ աշխատանքը ոչ միայն կարդալու ուսուցման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու կարևոր պայման է, այլև երեխաների հնչյունային լսողությունը զարգացնելու, կարդալիս և գրելիս քիչ սխալներ կատարելու հիմք է:

Բառի հնչյունային վերլուծությունն իրականացվում է մի քանի գործողությունների հաջորդաբար կատարման ճանապարհով.

1. *Երեխան արտասանում է բառը՝ ցույց տալով բառի գծապատկերը:* Կարդալ չիմացող երեխայի համար սա բավականին բարդ գործողություն է, որովհետև նա ոչ թե արագ պիտի արտասանի բառը՝ ձեռքը սահեցնելով գծապատկերի վրայով, այլև պիտի ցույց տա հատկապես այն վանդակը, որին համապատասխանող հնչյունն ինքն արտասանում է: Շահեկան է առաջին վարժությունները կատարել երկհնչյուն, եռահնչյուն բառերի շուրջ, իսկ հետագայում կարելի է ավելի բազմահնչյուն բառեր ընտրել:

2. *Բառի մեջ հնչյունի առանձնացում ձայնի բարձրությամբ:* Երեխաների այս կարողությունը ձևավորելու համար նախ ուսուցիչը պիտի տա խոսքի օրինակ՝ դարձյալ ընտրելով եռահնչյուն բառեր: Բառի հնչյունային վերլուծության ժամանակ պիտի որոշել, թե որ հնչյունը պետք է առանձնացնել, հնչեցնել ընդգրկված, երկար և առանձնացված կրկնել այդ հնչյունը:Օրինակ եթե կամենում ենք առու բառի մեջ առանձնացնել ա հնչյունը, պետք է արտասանել ա-ա-ա-ռու, իսկ եթե ռ հնչյունը՝ ա-ռ-ռ-ռ-ռու, եթե ու հնչյունը՝առ-ու-ու: Պարզ է, որ այդպիսի արտասանությունները երեխայի համար անբնական են,խորթ, անսովոր, հետևաբար պետք է այս գործողությունները կատարել իբրև խաղ, որն երեխայի համար ավելի հաճելի է և ցանկալի:

3. *Բառից առանձնացնել և մեկուսի արտասանել այն հնչյունը, որն արտաբերվում է երկար, ընդգծված և ձայնով առանձնացվում է*՝ա-ա-ա-ռու, առ-ու-ու-ու:

4. *Բառի հնչյունային վերլուծություն:* Բառի գծապատկերի վրա գրատախտակին գունավոր կավիճով կամ տետրում գունավոր մատիտներով գծել համապատասխան հնչյունի վանդակը, ձայնավորը՝ կարմիր, բաղաձայնը՝ կապույտ:

Գործողությունների թվարկությունն իսկ ցույց է տալիս, թե որքան հսկայական մտավերլուծական աշխատանք է կատարում երեխան այս խնդրի լուծման ժամանակ: Նմանատիպ աշխատանքի շնորհիվ բոլոր երեխաները աստիճանաբար յուրացնում են ուսումնական խնդիրը՝ միաժամանակ նպատակասլաց կերպով առաջ մղելով իրենց մտավոր զարգացումը:

Այս աշխատանքը կատարելու համար առաջին դասարանցին պետք է կարողանա բառն արտասանել, արտասանած յուրաքանչյուր հնչյունի տեղը ցույց տալ

գծապատկերի վրա, այնուհետև բառն արտասանել ամբողջությամբ: Պիտի նկատի ունենալ, որ այս կարողությունները միանգամից չեն մշակվում, սակայն մինչև դրանք հմտություն չդառնան, տառաճանաչությունը սկսելը անիմաստ է: Որպեսզի յուրաքանչյուր երեխայի մեջ ձևավորվի այդ հմտությունը, նա պիտի ինքնուրույն ասի բառը, գծի գծապատկերը և գունավորի համապատասխան վանդակները:

Այս գործողությունները պիտի կրկնվեն գրաճանաչության նախայբբենական շրջանի յուրաքանչյուր դասի ժամանակ (դասագրքի էջ 34-39):

Պարզ է, որ նման աշխատանքը ոչ միայն կիոգնեցնի երեխային, այլև կձանձրացնի: Այդ ձանձրույթը կանխելու և աշխատանքը հոգնեցուցիչ չդարձնելու համար պետք է օգտագործել դիդակտիկ և տարաբնույթ հնչյունային խաղեր (Ա. Բալայան, «Նախաշավիղ» 3.2017): Խաղային գործողությունների դինամիկան նպաստում է մանկական խոսքի ակտիվացմանը: Որպես օրինակ բերենք «Գուշակի՛ր՝ ո՞վ է կանչում» խաղը: Ցուցադրել խաղալիքներ, նկարներ. կատու, բու, ագռավ, բադ և այլն: Հետևել, որ երեխաներն արտասանեն բառի պարզ հնչյուններն առանց փափկացնելու, կոշտացնելու՝ ամրակայելով ձայնավոր և բաղաձայն հնչյունների արտասանությունը, միաժամանակ զարգացնել երեխայի լսողական ուշադրությունը և խոսքային լսողությունը:

Այս աշխատանքներից երեխաները պիտի ձևակերպեն եզրակացություններ՝ անշուշտ, ոչ սահմանման ձևով:

Հետևություն.

Լեզվի բոլոր հնչյունները բաժանվում են երկու խմբի: Մի խմբի հնչյուններն արտասանվում են մինչև վերջ և լսում ենք նույն հնչյունը. դրանք **ձայնավորներն** են, այսինքն ձայն ունեցող հնչյունները: Մյուս խմբի մեջ մտնող հնչյունները կարճ են արտասանվում, արագ վերջանում են ու շարունակվում են «ը»-ով, այսինքն երկար արտասանելիս միայն «ը» է լսվում: Դրանք **բաղաձայն** հնչյուններն են: Հետո երեխաները պիտի ասեն բառեր, գծեն դրանց հնչյունային գծապատկերները, գտնեն հնչյունի տեղը վանկում, արտասանեն առանձին հնչյունները, որոշեն թե որն է բաղաձայն, որը՝ ձայնավոր, որից հետո ներկեն ձայնավորի վանդակը:



Նմանատիպ վարժությունների միջոցով երեխաներն աստիճանաբար ձեռք են բերում երկվանկ, եռավանկ բառերի մեջ ձայնավորները որոշելու և գծապատկերում դրանց տեղը ցույց տալու կարողություններ: Հետո երեխաների ուշադրությունը պետք է

հրավիրել վանկատած բառերի հնչյունային գծապատկերների վրա և գալ այն համոզման, որ յուրաքանչյուր վանդակի մեջ կա ներկած (կարմիր կամ կանաչ) վանդակ, այսինքն՝ մեկ ձայնավոր հնչյուն: Նշանակում է՝ յուրաքանչյուր վանկի համար անպայման ձայնավոր հնչյուն է պետք:

Այսպիսով, ամբողջ վերլուծության շղթան՝ **պատմություն, նախադասություն, բառ, վանկ, հնչյուն (ձայնավոր, բաղաձայն)** հաջորդականությամբ այսպիսի պատկեր կունենա գծային մոդելով արտահայտելիս:



Գրելու նախապատրաստում

Գրաճանաչության նախայբբենական շրջանի կարևոր խնդիրներից է նաև գրելու նախապատրաստումը, այսինքն՝ լսած հնչյունն իր համապատասխան տառով նշանագրելը, տառերը համադրելով բառեր ու նախադասություններ ստանալը: Այդ աշխատատանքները զարգացնում են.

1. Մատների մանր ֆալանգների ամրացումը
2. Ձեռքի դաստակի մարզումը
3. Տեսողական հիշողության զարգացումը

4. Գրելու ժամանակ հիգիենայի կանոնների կարևորության գիտակցումն ու դրանց պահպանման ունակության մշակումը
5. Տետրի մեջ կողմնորոշվելու կարողության մշակումը
6. Ուրվագծերով տրված նկարների գունավորում՝ առանց սահմաններն անցնելու
7. Ձախից աջ գրության ապահովումը
8. Հայերենի հիմնական տառամասնիկները գրելու կարողության մշակում

Երեխայի ձեռքը գրելուն նախապատրաստելու համար բացառիկ կարևոր նշանակություն ունեն պատկերների գունավորման վարժությունները, որոնք հնարավորություն են տալիս գրիչը բռնել սովորեցնել, մատիտով աշխատել, գունավորման չափերն ու սահմանները պահել: Կարևոր է նաև պարզ պատկերների մանրագծումն ու նրբագծումը, որը զարգացնում է աչքաչափը, սահմանի և հեռավորության, համաչափության, ուղղության ու զուգահեռության զգացողությունը:

Գրելու նախապատրաստման աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է նաև
ա) մշակել ձեռքի՝ ձախից աջ գնացող շարժումներով, առանց տետրը շարժելու
մեկ ուղղությամբ ներկելու(գրելու) ունակություն
բ) սովորեցնել մատիտը (գրիչը) ճիշտ բռնել
գ) տետրը կամ նկարչական տետրը դնել սեղանին 45 աստիճան թեքությամբ և պահպանել տետրից աչք ընկած տարածության սահմանը:

Նկարելու, ներկելու, գրելու ժամանակ պետք է աշխատանք տանել, որ երեխաները ոչ միայն կարողանան լսել ուսուցչի բացատրություններն ու հրահանգները, այլև՝ կատարեն դրանք: Հայերենի տառամասնիկներն ուսուցանելիս պետք է նկատի ունենալ, որ երեխաները գրել են սովորելու ամբողջական տառերով: Մասնիկների գրուսուցումը պարզապես գրելու նախապատրաստում է:

Հնչյունային լսողության զարգացումը գրաճանաչության գործընթացի արդյունավետության ապահովման գլխավոր պայմանն է և նախայբբենական շրջանի խնդիրներից հիմնականը:

Այս կարևոր խնդրի լուծումը հիմնականում պիտի իրականացվի դիդակտիկ խաղերի, հնարների միջոցով, որոնք ամենաարդյունավետն են, որովհետև՝

1) Երեխաներին սովորեցնում են կարդալ՝ դասարանում ստեղծելով ուրախ, աշխույժ, անկաշկանդ մթնոլորտ
2) Ձևավորվում է ընկերների հետ համագործակցելու ունակություններ

3) Խաղի ժամանակ ակտիվանում են երեխաների մտածողական գործողությունը, ուշադրությունը, խոսքը, երևակայությունը
4) նրանց մեջ ձևավորվում են նաև երկարատև կենտրոնանալու, կամք դրսևորելու ունակություններ:

Հնչյունային լսողության զարգացմանը նպաստող խաղերից են՝

Խաղ 1. «Ո՞վ է կանչում»

Խաղ 2. «Հավաքի՛ր ծաղիկը»

Խաղ 3. «Գտի՛ր խալը»

Խաղ 4. «Բնակեցրու՛ կենդանիներին»

Խաղ 5. «Բառաշղթա»և այլն:

Այսպիսով, խաղերը նպաստում են ոչ միայն երեխաների հնչյունային լսողության զարգացմանը, այլև վերացնում լարվածությունը, վախը, թերարժեքության զգացումը, ստեղծվում է դրական, աշխատանքից հաճույք ստանալու հոգեկան վիճակ: Խաղային մեթոդը ստեղծում է դասի ժամանակ ճանաչողական ակտիվությունը պահպանելու, ուսումնական բարդ, հոգնեցնող գործընթացը թեթևացնելու հնարավորություն:

Գրաճանաչության նախայբբենական շրջանում բացի հնչյունային վերլուծության գրաֆիկական մոդելավորման վարժություններց, կարևոր են նաև երեխաների գրաֆիկական տեսողության զարգացման ուղղությամբ կատարվող վարժությունները, որպեսզի նրանք կարողանան տարբերել՝

ա) Կողմերը՝ վերև, ներքև, աջ, ձախ

բ) Առարկաների ձևերը՝ քառակուսի, ուղղանկյուն, կլոր, ձվածիր

գ) Գծերը՝ ուղղահայաց, հորիզոնական, ուղիղ, թեք, կոր

դ) Տողերն ու տառամասնիկները:

Այս ամենը հենց ուսումնառության առաջին իսկ օրերից սկսած երեխայի համար պետք է որոշակի արժեք և իմաստ ունենա:

Եզրակացություն

Ուսումնասիրելով և վերլուծելով մանկավարժական, մեթոդական գրականությունը, հանրակրթական չափորոշիչները, ուսումնական ձեռնարկներն ու դասագրքերը, ինչպես նաև հիմնվելով մեր կողմից կատարած հետազոտական աշխատանքների արդյունքների վրա, կարելի է եզրակացնել, որ՝

1) Երեխաները ուսուցման նախայբբենական շրջանում վարժվում են խոսքից (պատմությունից) առանձնացնել նախադասություն, նախադասությունից՝ բառ, բառերը վանկատել և ենթարկել հնչյունային վերլուծության:
2) Իմանում են, թե ինչ է գծապատկերը, վանկային կորը, հնչյունը, ճանաչում են ձայնավոր հընչյունները, տեղեկանում են նրանց վանկարար դերի մասին: Զարգանում է նրանց հնչյունաձայնային լսողությունը, բառից այս կամ այն հնչյունն առանձնացնելու կարողությունը, լսելու և խոսքը կառուցելու, մտքերը շարադրելու հմտությունը:
3) Երեխաները սովորում են անվանել նկարում պատկերված առարկաները, կազմել նախադասություններ ըստ նկարների, հորինել պատմություններ, կարդալ նկարաշարեր, նախադասություններն ու բառերը ներկայացնել գծապատկերներով:

Այս լեզվական նախագիտելիքներն, անշուշտ, դյուրին չէ յուրացնելը և ուսուցչից պահանջում է համբերատար, մանրակրկիտ, երկարատև աշխատանք:

«Կրթության հարցում հմտությունների զարգացումը պետք է նախորդի մտքի զարգացմանը»:

Արիստոտել

Գրաճանաչության նախայբբենական շրջանում զարգանում է երեխաների ստեղծագործական երևակայությունը, հիշողությունը, մտածողությունը, նրանց մեջ ձևավորվում է երկարատև կենտրոնանալու, կամք դրսևորելու ունակություններ:

Այս ամենը կատարվում է երեխաների համար հոգեհարազատ այն միջավայրում, որն ստեղծում է դասագիրքն իր գունագեղությամբ, առաջադրանքների հետաքրքրաշարժությամբ, նյութի մատուցման խաղայն հնարքներով:

Այսպիսով, ուսուցման նախայբբենական շրջանում կատարվող բազմաբնույթ աշխատանքները կայուն հիմք են հանդիսանում կարդալու կարողության ձևավորման համար:

«Որպիսի երեխաները կարդալ սովորեն, նրանք պետք է սիրեն կարդալը, իսկ որպեսզի նրանք սիրեն կարդալը, կարդացածը պետք է լինի հասկանալի և հետաքրքրքշարժ»:

Լև Տոլստոյ

Ուրեմն, ինչպես տեսնում ենք, ոչ մի քայլ առաջին դասարանում ինքնքնպատակ չէ: Յուրաքանչյուր գործողություն հող է նախապատրաստում հաջորդ քայլի համար:

Հետևաբար ուսուցիչը միշտ պետք է հիշի, որ այսօրվա իմաստավորված քայլը վաղվա հաջողության նախադուռն է, որովհետև ուսուցումը շարունակական գործ է:

Օգտագործված գրականություն

1. Տեր-Գրիգորյան Ա. Ե. «Հայոց լեզվի մեթոդիկա», Երևան- 1980, էջ 69-82
2. Տեր-Գրիգորյան Ա.Ե «Կարդալու և գրելու սկզբնական կարողությունների ձևավորումը»
3. Տեր-Գրիգորյան Ա.Ե. «Ուսուցումը նոր առաջին դասարանում»
4. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ. «Այբբենարան»- ուսուցչի ձեռնարկ
5. Սարգսյան Վ.Ա. «Այբբենարան»- ուսուցչի ձեռնարկ
6. Սարգսյան Վ. Ա., «Խաղ և ուսուցում», «Խաղային տեխնոլոգիաների կիրառումը դպրոցում», «Նարեկ»-2012
7. Գյուլամիրյան Ձ. «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա»
8. Բալայան Ա. «Նախաշավիղ» Գիտամեթոդական հանդես, 3.2017